

**VII. ՀՀ ԱՎԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ  
2004թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՉԱՆԱՌՈՒԹՅԱՆ ,  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՄԻՆ**

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2004թ. ընթացքում փաստաթղթաշրջանառությունը հետևյալ թվային պատկերն է ներկայացնում.

**1. Մտից թղթակցություն՝**

ա/ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ – 163 միավոր,  
բ/ գրություններ նախարարություններից և գերատեսչություններից (2165 միավոր),  
ՀՀ ԱՎԾ տարածքային ստորաբաժանումներից (980 միավոր), արտասահմանյան երկրներից (1551 միավոր), այդ թվում՝ ԱՊՀ երկրներից (106 միավոր): Ընդամենը մտից թղթակցությունը կազմել է 4696 միավոր (2003թ.-ի 4963 միավորի դիմաց):

**Ընդամենը մտից թղթակցություն – 4859 միավոր (2003թ.՝ 5063-ի դիմաց),**

**2. Ելից թղթակցություն՝ 7130 միավոր (2003թ.՝ 7015 միավորի դիմաց)**

Ընդհանուր փաստաթղթաշրջանառությունը 2004թ. ընթացքում կազմել է 11989 միավոր (2003թ.՝ 12078 միավորի դիմաց):

Ստացված թղթակցությունը, 2003թ. համեմատությամբ, 2004թ.-ին նվազել է 204 միավորով, ելից թղթակցությունն ավելացել է 115 միավորով:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից 2004թ. ընթացքում վերահսկողության է վերցվել 155 փաստաթուղթ և հանձնարարական (ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ և հանձնարարականներ, արձանագրային հանձնարարականներ, այլ նախարարություններից գրություններ և այլն), որոնք կատարվել են սահմանված ժամկետներում: